




891.99.09
4 - 47



891.99.09
9-47

ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՑ
ՄԱՏԵՆԱԳԻՐ.

ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. Ա.ՍՏՈՒՄ.ԾԱՀՆՁԻ ՄՆԱՑՈՐԴԱՅ ԳՐՔԵՐԻ Ա.Ո.Ա.ԶԻՆ ՀԱՅ
ԹԱՐԳՄԱՆՈՂԸ Ա.ՍՈՐԾԿԱՆ Ա.Ո.Ա.ԶԻՆ ԲՆԱԳ.ԻՒՅ – ԹԱՐԳՈՒՄԻՑ.

444
11/15 - 48

ԳՐԵՑ

Ս. ԷՉՄԻԱՅՆԻ ՄԻԱՅԱՆ
Բարլուղիմէոս և պիտկոպոս ԳԵՂՐՂԵԱՆ (Ճուղութեանց)
Վաղարշապատցի:



Վաղարշապատ
Տպարան Մայր Աթոռոյ Մրբոյ Էջմիածնի
1908

19 NOV 2011
PA
7145

H ADM
5-1242

ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՑ

891.99.09
4-47

ՄԱՏԵՆԱԳԻՐ.

ԽՈՐԵՆԱՑԻՆ է Ա.ՍՏՈՒԱ.ԾԱ.ՇՆՁԻ ՄՆԱՅՈՐԴԱՅ ԳՐՔԵՐԻ Ա.ՌԱՋԻՆ ՀԱՅ
ԹԱՐԳՄԱՆՈՂԸ Ա.ՍՈՐԱԿԱՆ Ա.ՌԱՋԻՆ ԲՆԱԳՐԻՑ—ԹԱՐԳՈՒՄԻՑ.




ԳՐԵՑ

Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆ

Բարդուղիմեռ և պիտի գէորգեան (Ճուղովեանց)

Վաղարշապատցի:



ԽՆԲ N 27399

Վաղարշապատ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

1908

891.99.09 3855-86
 գ. 47 մ. Օճորդին
 բարեկարգ է պարզ և
 ճշգրտված նույնագոր
 1908թ.
 Գրք. 7440 31.05.1908



3855-86

ՀԱՅՈՒԹ ԱՐԴ ԳՐԱԴԱՐԱՆ

Այս գիրախտ օրերից, երբ Հային վիճակուեց իւր սեպհական հայրենիքումն իսկ օտար համարուել, և այնուհետեւ ցայսօր հետզետէ մեծ ու փոքր հատուածներով ցրուիլ աշխարհի ամեն անկիւն, մեղ մնում էր անցեալի, հայրենիքի, և միմեանց հետ կապը պահող, որով և ազգային մի-ամբողջութեան յուշարձան՝ երկու մեծ Սրբութիւններ—Հայոց պատմութիւնը և Ս. Էջմիածինը։ Սեպհական լեզուն և կրօնը առաւել ևս զօրեղ կապ են, ինչ կարծիք, սակայն սորտանք չէ որ պայմանական են, և կարող են ցրիւ եկած անտէր անտիրական ազգայնոց կապը պահել՝ որչափ իրենք էլ կապուած կը մնան և ոդի կառնուն առաջններից, ինչպէս ծառը արմատից—հողից։

Բայց մենք ինքնասպան ազգ ենք, հաւասարի շատ ապացոյցներ կան դուռածածին է անցել այն օրից՝ երբ ամենայն Հայոց Ս. Էջմիածինը կեղծիք—նոր Էջմիածին յայտարարելու կործանիչ ջանքերը խրախուսում էր և՛ հէնց ինքը Էջմիածնի Հայոց Հայրապետը. «իսկական» Էջմիածինը վերաշննելու անունով խաչագողական ժողովարարութիւն թոյլ տալը։ Երբ տրտունջը և գրաւոր բողոքը ծանրացաւ, նա, առանց քաշուելու, այլև սրտմտած՝ ասաց Միաբանութեան երեսին—«Խաչիկ կ'ըսէ ան է Էջմիածինը, դուք կ'ըսէք՝ աս. ես ալ կ'ըսեմ» ՚Ն ան է և ՚Ն ան «... իսկ երբ (1904—5) լոյս տեսաւ իմ՝ «Վաղարշապատը եւ Ս. Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են» (հայ—ռուս.) շարադրութիւնը, նա դժգոհ մնաց հէնց այնպէս՝ ինչպէս Խաչիկը, «Մշակը», «Նորու Վրեմյա»ն և... Բայց գոնէ խափանուեց արշաւանքը և գայթակղութիւնը։

Ազգային միւս մեծ Սրբութիւնը, մեր տոհմային պատմութիւնը, Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը, մեր օրերում ենթարկուեց, —քննադատութեան անունով,—խիստ յարձակման. նորա հեղինակին համարեցին իւր անձնաւորութիւնը, պատմածները, և յատկապէս գրելու ժամանակը՝ կեզո՞ւ կո՞չե՞մյ։ Քանի քանի անդամ Վիեննայի Միսիթարեանց գիտական ամսագիր «Հանդէս ամսօնայի էջերում ցեխ շպրտեցին, «առա Խորժուաց» կոչեցին անմահանուն սուրբ Ծերունուն. քրքջում էին առհասարակ։ —Մի անդամ, Խորենացու Հայոց պատմութեան զանազան տպագիրներ էի խնդրում ձեմարանի մատենադարանում, լսարանցի երկու—երեք տղայք պտրում էին. յանկարծ ներս մտաւ Տեսուցը, և երբ իմացաւթէ ինչ եմ ուզում, պատասխանեց. «Խորենացու քարն արդէն հորն ընկաւ, էլ աւելորդ է նորա մասին մտածելը»։

—Այդպէս հեշտ չենք կարող հրաժարուել Խորենացուց, մանաւանդ որ միւս պատմագիրները նորա վերայ են հիմնուել. Ուրեմն մենք պատմութիւն չունինք... .

—Ինչու չունինք, Ագաթանգեղոս, Կորիւն, Ղազար Փարպեցի։ Ես խնայեցի Տեսին աշակերտների ներկայութեան, և լուցի. նա գնաց։ Ապա ասացի այն աշակերտաներին. «Դուք կարդացել և գիտէք անշուշտ Աղաթանգոս, Կորիւն և Ղազար Փարպեցի, այնուեղ Հայոց պատմութիւն կայ»։ — Ու զեղոս, իսկ Հայից նորա տոհմային գիտցաղնական պատմութիւնը, ինչպէս հասկացել խլում է Թուրքը. նորա վաստածակառոյց էջմիածինը. նորա Ս. Լուսաւորիչը, նորա «լոյս հաւատը» և «Հն կանանց Մետոնը», նորա հայ-

Ստէք, խլէք Հայից նորա տոհմային գիտցաղնական պատմութիւնը, ինչպէս հասկացել խլում է Թուրքը. նորա վաստածակառոյց էջմիածինը. նորա Ս. Լուսաւորիչը, նորա «լոյս հաւատը» և «Հն կանանց Մետոնը», նորա հայ-

րենիքը՝ հօ վաղուց է խլուած։ Փռքր մի ևս, խելօք Հայեր, էլ մեզ չսիրողներին անելու բան դրեթէ չի մնայ։ վաղուց այսպէս է Հայութիւնը պայմանաւորուած, հանգամանեների դասաւորութեամբ։

Կայ մի ուրիշ ազգ, որի տոհմային պատմութիւնը միտումնաւոր կամ ակամայ սխաներով ու առասպելներով զուգուած չինի։ Ո՞ր դպրոցականը երկիւղածութեամբ չի սովորել և պատմել Հրէից Աստուածապահ ազգի պատմութիւնը։ Յունական առասպելներին՝ հօ ամենքը սիրահար են։

Հիները դիտակցելով սովորեցնում էին ինքնայարգութիւն։ — Բիբլիական դրախտը՝ Հայաստանումն էր։ — Նոյի իջած և մշակած երկիրը՝ հօ Հայոց Միջնաշխարհ Այրարատն է։ — Հայեր, նոյն և Նոյի լեզուն՝ Աստուածախօնն է։ — Բարելական աշտարակից յետոյ մարդկային հօտի վերայ աստուածացող բռնաւոր Ներսովթայ դէմ միակ ընդվզող և նորան կործանողը՝ ազատասէր և բարեպաշտ Հայկ և Հայկազուներն էին։ — Հայրենիքի սահմանները ոտնակոխ առնել համարձակող նիւքար Մադէսին՝ Արմաւրի աշտարակի բարձրից գամեց « Հայրենասէր » Արամը։ — Դաւ նիւթող « նենդաւոր » Աժգահակին՝ « շամփրեց » Արամազդ մեր Տիգրանը։ — Երկինքը, երկիրը և ծիրանի ծովը երկնեցին և ծնան մեր « վիշապաքաղ » Վահագնին։ նա հուր հեր ունէր և արեգակ աչքեր, նա կուտել է վիշապների հետ և յաղթել։ Հերակլեայ քաջագործութեանց նման բաներ էին նորա մասին հնումը պատմում հայ վիպասանները։ Խորենացին իւր ականջով լսել է սորանք բամբիւ սով երգելիս։ — Տորքը՝ քաջ և ուժեղագոյն էր Պարսից Սադճիկից, Հրէից Սամփոնից և Յունաց Հերակլէսից։ — Արայ Գեղեցիկը՝ ողջախոհութեան մեծ զոհ բերեց քան Յովսէփ Գեղեցիկը։ — Առաջին քրիստոնեայ ազգը, այլ և քրիստոնէութեան դէմ կոիւ մղող Մաքսիմինոս Դայային և նորա Հոռովմէական լեզէօններին դիմադրող ջարդողը՝ Հայոց Մայր Եկեղեցու լուսատիպ գաղափարը և տեղը՝ իջել ցոյց է ուռել Յիսուս Միածինը, ոսկի ուռամբ հարուածելով հին մոլորութիւնը։ — Ուրմղական հուրը, որ սպառնում էր փոնիկել և ճարակել քրիստոնեայ աշխարհը՝ հայ կանայքը հանգցրին։ — Նիկիական անխառն ճշմարիտ հաւատը՝ մէջ հաւատն է . . . Եւ սորանք այսպէս վիպելու և երգելու մեր իրաւունքը չեն ժխտում պատմութիւնը և աւանդութիւնը։ Իսկ ինչումն է վասու։ Սակայն ուռչում են դպրոցական տպաւորուող կուրծքերը, սովորում են ինքնայարգութիւն։ — Աւղականը ուրել շշանալ օտարի խաբուածիկ հրապոյներով։ Սնապարծ լինելու երկիւղ չկայ։ Բայց, տակաւին անապատի խորքում, մտածում էք հրաժարուել Եհովայից։ Նախ կանգնեցրէք դոնէ հորթ . . . մի բան՝ որի շուրջը խմբուէիք։

Խորենացու Հայոց պատմութեան մէջ թերութիւն և սպրդած սխաներ պատահելով հանդերձ, ունի նա աննման առաւելութիւններ։ այդ չեն ուրանում՝ գնահատել գիտեցողները։ Բայց նորա գրութեան ժամանակի խնդիրը՝ վտանգուած էր, տարուած էին համարում, « Քարը հորն ընկած »։

Ահա ժամանակի այդ խնդիրը ի նպաստ Մովսէս Խորենացու վճռելուն է ծառայում ներկայ շարադրութիւնս։ — Երեք յօդուած, առաջին երկուքը արտատպում են՝ բայց փաստերով ճոխացրուած և աւելի մշակուած, իսկ երրորդը՝ նոր է լոյս տեսմում։

Բարդուղիմէոս ելպ. Գէորգիան (Ճուղուրեանց)։

ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. ԴԱՐԻ Ա.ՌԱԶԻ ՎԱՐԴԱՐԴԻՆ ՔԱՌՈՒՐԴԻՑ ՄԱՏԵՆԱԳԻՐ

ԽՈՐԵՆԱՑԻՆ է ԱՍՏՈՒԾԱՇՆՁԻ ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐԲԵՐԻ ԱՌԱԶԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՂԸ ՍՈՐՄԱԿԱՆ ԱՌԱԶԻՆ ԲՆԱԳՐԻՑ—ԹԱՐԳՈՒՄԻՑԻՑ։

I.

Ներկայ 1905 թ. Յունվարի 29-ին միայն առաջին անգամ ձեռքս անցաւ պրօֆ. Դր. Խալաթեանցի հրատարակած՝ « Գիրք ՄՆԱՑՈՐԴԱՑ, ըստ հնագոյն հայ թարգմանութեան, զառաջինն ած ի լոյս ըստ կրկին օրինակաց, հանդերձ Բ. Լուսագիր նմանատպութեամբ նոցին՝ Գրիգոր Խալաթեանց։ Մուկուա, ՌՅՈՒԼ — 1899 ։

Ա.յդ հրատարակութեան առթիւ յարգելի պրօֆէսուրը իւր Յառաջաբանի մէջ, էջ թ. ասում է. « Մեր նորագիւտ թարգմանութիւնը ամենայն հաւատականութիւնը հայերէն լեզուի ամենահին՝ թէ չասենք՝ անդրանիկ գրուածքներից մէկն է ընդունուելու, որ հասել է մեր ձեռքը։ Եթէ անգամ տարակոյս ծագի Երսաւաղէմեան օրինակի Մնացորդաց Գրեկերի վերջում գրած յիշատակարանի վաւերականութեան մասին Մեծ Թարգմանիչ Սահակ Կաթողիկոսի անձնաւորութեան վերաբերմամբ, որ՝ ինչպէս ասած է, « զՄնացորդս յետոյ ամենայն մարդարէից է թարգմանեալ (Տեառն Սահակա Կաթողիկոսի)։ — այսու ամենայնիւ անկասկած խորին հնութեան դրոշը ենք նկատում այս թարգմանութեան վերայ։ և այդ հնութեան ժամանակին նորի ճգանց՝ բայց և յուրախու-

մէջն է արդէն նորա առաջնակարգ կարեռութիւնը»⁽¹⁾։ — Կարծում է որ այդ թարգմանութիւնը՝ Ասորական բնագրից առաջին հայ թարգմանութեան մինչև ցայսօր անյայտութեան մէջ պահուած մի խոշոր բեկորն է, որպիսի թարգմանութեան մասին յիշում է Մեծ Թարգմանիչների աշակերտ Կորիւն»⁽²⁾։ Բայց որովհետեւ ներկայ Ասորերէնից, — որպէս եօթանասնից թարգմանութիւնից, — տարբերում է և աւելի մօտենում երայական բնագրին, ուստի ենթադրում է որ այս նորագիւտ հայ թարգմանութիւնը արուած պիտի լինի Ասորական կորած առաջնին բնագրից, որը կոչում էր Թարգում։ Իսկ վերջինս թարգմանուած էր ուղղակի Երայական բնագրից՝ անմիջնորդաբար։

Ինձ յայտնի չէ թէ ուրիշներ ինչպէս ընդունեցին պ. Գր. Խալաթեանցի այդ կարծիք և ենթադրութիւնները, կամ թէ ուրիշ ինչ նոր կարծիքներ յայտնուեցին նոյն թարգմանութեան առթիւ։ բայց ես պիտի գամ ահա նորա այդ վարկումները աւելի ևս հաւատականութեան մասին Մեծ Թարգմանիչ Սահակ Կաթողիկոսի անձնաւորութեան վերաբերմամբ, որ՝ ինչպէս ասած է, « զՄնացորդս յետոյ ամենայն մարդարէից է թարգմանեալ (Տեառն Սահակա Կաթողիկոսի)։ — այսու ամենայնիւ անկասկած խորին հնութեան դրոշը ենք նկատում այս թարգմանութեան վերայ։ և այդ հնութեան ժամանակին նորի ճգանց՝ բայց և յուրախու-

1. « Ինքն (Մերսովը) դառնայ ի չայս. և գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ Ասորւայն՝ ոչ լինելոյ Յունի » (Խոր. գ. ԵՊ.):
2. Եւ Խորենացին յիշում է. ան գ. ԵՊ. ԵՊ. ԿԱ:

թիւն միանդամայն, —որ Խորենացին է Մնացորդաց Գրքերի այդ առաջին հայ թարգմանողը Ասորերէնից:

Դէպքով, գրքի գիտելու համար միայն պէտք եղաւ ինձ ստանալ ձեմարանի մատենադարանից. բայց և Յառաջանց կարդալուց յետոյ՝ տեղ-տեղ ուշադրութեամբ աչքից անցրի, ապա մի քանի կտոր համեմատեցի և տեսայ, ճշմարիտ, որ այս գրքերը միանդամայն տարբեր թարգմանութիւն է մեր Եօթանասնից կոչուած հայ թարգ-մանութիւնից. Հետաքրքրուեցի կարդալ ծայրէ ի ծայր, ինձ թւում էր թէ մեր պատմահայր Խորենացին է ինձ հետ խօսում։ Այդ նմանութեան պատճառ՝ սկզբում կարծեցի թէ նախնական պատերազմներին կարարդիրներն էին։ Խիրեցի երկրորդ և երրորդ անդամ՝ կարդալ, —կարդացի և՛ ըստ Եօթանասնից թարգ-մանութիւնը, —որով աւելի և աւելի համազուեցի Խորենացուն դտած լինել։

Ամենքից շատ ինքը պրօֆ. Գր. Խալաթեանցն է սիրում Խորենացու Հայոց պատմութեան ազբիւրները ցոյց տալու՝ հետեւար և՛ նորա ապրած ժամանակի խնդիրը լուծելու համար՝ այստեղից—այնտեղից բառեր, փոքրիկ նախադասութիւններ յաջող կամ անյա-ջող կերպով քաղել և ցուցադրել։ Այս մեթօդը ընդունուած է առհասարակ. այս մեթօդով է իւր եղակացութեան համառում և՛ նորայր Ն. Բիւզանդացին՝ իւրին վարդապետ եւ նորին թարգ-մանութիւնը՝ բազմահմուտ հետազօ-տութեան մէջ։ Այդ ուղղութեամբ մի փորձ էլ մնում է ահա ինձ անել, ցոյց տալու համար Խորենացու Հայոց պատեղից—այնտեղից բառեր, փոքրիկ նախադասութիւններ յաջող կամ անյա-ջող կերպով քաղել և ցուցադրել։ Այս մեթօդը ընդունուած է առհասարակ. այս մեթօդով է իւր եղակացութեան համառում և՛ նորայր Ն. Բիւզանդացին՝ իւրին վարդապետ եւ նորին թարգ-մանութիւնը՝ բազմահմուտ հետազօ-տութեան մէջ։ Այդ ուղղութեամբ մի փորձ էլ մնում է ահա ինձ անել, ցոյց տալու համար Խորենացու Հայոց պատ-մութեան և այդ Մնացորդաց Գրքերի Ասորերէնից առաջին հայ թարգմանու-թեան ինամութիւնը, այն՝ որ վրիպելէ, զարդիայ. . . Ասիէլ որդի Աբեններայ. . . Եղիէլ որդի Յիաններայ. . . Պարմանք, պրօֆէսոր Խալաթեանցի

ուշադրութիւնից՝ այդ հրատարակու-թեան նորա երկար աշխատանքների ընթացքում, ինչպէս և՛ նորան աշխա-տակցող «գիտնականների» ուշադրու-թիւնից Բայց ես չեմ բաւականանայ միայն ընդունուած մեթօդով—բառեր, գարձուածքներ քաղել ցուցադրելով, այլև կը լուսաբանեմ Խորենացու մինչև ցայսօր լաւ չհասկացուած մի խոչոր պարբերութիւնը ես, որով և մատնա-ցոյց արածս փաստերը իրենք կը պսակեն իմ զեղուն յուսով այս փորձը Որքան երջանիկ փորձ, յաջողութեան գէպքում. որի չնորհիւ այսուհետեւ պիտի ստանան իրենց լուծումը շատ և շատ խնդիրներ։

Ա. Ասորերէնից թարգմանուած այս Մնացորդաց Գրքերում աչքի ընկնելու չափ սովորական են հայկական էան և էանց հայրանուան և աղդանուան գոր-ծածութիւնը, այն ինչ՝ Եօթանասնից կոչուած թարգմանութեան մէջ խիստ հազուագէպ են։ Օրինակ—«Ավատի յԱրիտանչանցն. . . Մանաւանցն դնդին. . . Ողիա Տոփատէանց Գողոնիէլէանց. . . Սափատիա Մաքատէանց. . . Սափիա Կամուէանց. . . Ամբրի Միրայելէանց. . . Խսամիա Աբդէանց. . . Յերիմութ Ողիէլ-էանց. . . Ուսի Երգէանց. . . Յագայ Զա-քարէանց. . . Յասիէլ Աբենէանց. . . Ողիէլ Յերովամէանց. . .» (ա. Մնաց. Գ. 3: Զ. 61: Ի. 15—22)։

Եօթանասնիցը—«Մափատիա» Յա-րիտադայ. . . յեղին Մանասէի. . . Քաղ-դայի ի նետուփատայ, որդի Գոթոնիէլի. . . Սափատիա որդի Մակրեայ. . . Ասաբիա որդի Սամուէլի. . . Ամարիաս որդի Միքայէլի. . . Սամէաս որդի Աբ-դիայ. . . Յերիմութ որդի Ողիէլի. . . Ովսեր որդի Ողիայ. . . Յագայի որդի Զարդիայ. . . Սափիէլ որդի Աբեններայ. . . Եղիէլ որդի Յիաններայ» (անդ) ¹։

Այսպէս՝ Մնացորդաց բովանդակ երկու Գրքերում։

Ո՛չ ապաքէն Խորենացին է յատուկ էան, էանց ածանցի այսպիսի յաճախու-թիւնը. «ի Բիւռոսւանն Սիրիզեայ. . . Յաբետութէան Հայկ. . . Տիտանէան Բելայ. . . Տիտանէան Բէլ. . . արքայն Տիտանէան. . . Մանաւազէան և Յզնուն-էան. . . Սիսակէանցն. . . Արայշան Արայի և Արայշան Արայ. . . Երուանդէան Տիգրանայ. . . Երգան. . . ի Հայկազնէան Տիգրանայ. . . Երուանդէան Տիգրան. . . Արայշան և Հայոց պատմութեամբք գոր-ծածութ իւր Հայոց պատմութեան մէջ. —«Ղամբաւս հինս և զզրոյցն նախ-նականս յիւրեանց նախառութան. . . հար-էանուած գրել»—«Հրամայէ զբաղում հար-էանուած զզրոյցս առաջնոցն այրել»—«յամբարանոցս հար-էանց նախառութան այսպէս արդեօք գտեալ»—«ի բուն հար-էանն նախառութանց կամ մեհենից»—«Այսպիսիս ընթերցասիրիցեմք իմաս-տութեան հար-էան (պատմութիւն) և զբուցատրութիւնս, որք են Քաղէա-զբուցատրութիւնս, որք են Քաղէա-զբուցատրութիւնս, եղիպատանեաց, Եղիպատացոց և Եղադացոց»—«Զորոց զանուանս յառաջնում հար-էան (գիրք) կարդեցաք»—«յառաջնում հար-էան (գլուխ) կոտորե-ցաց և Եղադացոց»—«Զորոց զանուանս յառաջնում հար-էան (գիրք) կարդեցաք»—«ի բազում հար-էան Եղին, և այլն Տեսս օրին. Խոր. ա. Բ. Գ. Զ. Ժ. Դ. Դ. Լ. Լ. Բ. Բ. Ժ. Ծ. Ծ. Խորենացին «Գէլ նախառութանց» և գործ է ածում, տես օրին. Բ. Բ.

Գ. Երուսաղէմի օրինակը—«Խաւ-սել սկսաւ Եաւուղ ընդ Ալունէան իւրում և ասէ»—«Իբրև ետես Ալունէան, մէս մեռաւ Եաւուղ»—«Սեղէկ Ամանացի, Նուարա Բերովթացի, Ալունէան Յովաբու որդույ Եարուհեա» (ա. Մնաց. Ժ. 4, 5: Ժ. 39)։

Լիմիածնի օրինակը—«Խաւսել սկսաւ Սաւուղ ընդ Ալունէան իւրում և ասէ»—

1. Տէս գ. Թագ. Ժ. 19, 20: Ժ. 7, 23, 31: Ժ. 5, 14, 20, 27: Ի. 39, 46: դ. Թագ. Ա. 18: Բ. 23, 34: Ժ. 19: Ժ. 8, 12: Ժ. 15, 18, 28: Ժ. 6, 11, 15, 21, 26, 31, 36: Ժ. 19: Ի. 20: Ա. 17, 25: Ի. 28: Ի. 5.

ԺԱ. «Եւ ահամ առնուն նոցա ծառայութեամբ երկրիս այսորիկ» (բ. Մնացողաց ԺԲ. 8):

Եօթանասնիցը—«Եւ շահեցն զծառայութիւն իմ, և զծառայութիւն թագաւորութեան երկրիս» (անդ):

Այսպէս, Եօթանասնիցը թէ տարբեր է և՝ թէ չունի-չգիտէ ահամ առնուն դարձուածը. բայց զոր Խորենացին գիտէ գործածել.—«Ոչ դէրեւն պատերազմին Արշակայ» (Խոր. բ. Դ.):

ԺԲ. «Եւ այս եկն ել պիղծ, եկաց առաջի Տեառն և ասէ. ես երթամ պատրել զնա» (բ. Մնաց. ԺԲ. 20):

Եօթանասնիցը—«Եւ ել հանչ եկաց առաջի Տեառն և ասէ. ես խաբեցից զնա» (անդ):

Իսկ Խորենացին—«Եցոյց հովիւ և առաջնորդ ժողովրդեանն ։—«Քանզի ի քաժանել լեզուացն ընդ ամենայն երկր, ոչ խուռն ի խուռն և ոչ անառաջնորդ կամ անդիլսաւոր այս լինէր ։—«Որպէս զի միւսանդամ տեսեալ զնոսա, առաջնորդ և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօք հաստատեցէ» (Խոր. ա. Դ. Ա. Սակո Բիւրասպեայ հաւաստին»: բ. Զ.):

ԺԳ. «Այր հաստաբանուն կորովի ձեռաւը իբրև զփորձ կամեցաւ առնել զանձին, նետ մի ձգեաց ի խուռն գնդին և եհար զարքայն» (բ. Մնաց. ԺԲ. 33):

Եօթանասնիցը—«Եւ այր ոմն ելից զաղեղն կորովութեամբ, և եհար զարքայն» (անդ): Զունի հաստաբանուն և ոչ մի տեղում:

Իսկ Խորենացին—«Այս Հայկ, գեղապատշաճ, անձնեայ, քաջագանդուր, խայտակն և հաստաբանուն» (Խոր. ա. Ժ.):

ԺԴ. «Եւ ի բաց կացին վաղվաղակի արք պատերազմին, որ ածէն սկզբին» (բ. Մնաց. ի. 14):

Եօթանասնիցը—«Եւ թողին պատերազմօղքն զդերութիւնն» (անդ):

Իսկ Խորենացին—«Զամենայն միահամուռ ածէն գէրէն սաստիկ յԱրտաշատ» (Խոր. բ. ՄԲ.):

ԺԵ. «Թագաւորեաց փոխանակ նորա Աղադ . . . և մեռաւ Աղադ և եղեն այնուհետեւ առաջնորդ թեմնա, առաջնորդ Աղուա, առաջնորդ Յեթէ, առաջնորդ Յեղիբամայ . . .» (ա. Մնաց. Ա. 50—54):

Եօթանասնիցը—«Թագաւորեաց փոխանակ նորա Աղադ . . . և մեռաւ Աղադ: Եւ այս են իշխանք եղովմայ իշխան Թամանայ. իշխան Դովդայ. իշխան Յեթեր. իշխան Եղիսակամաս . . .» (անդ): Այսպէս, Եօթանասնիցը թէ տարբեր է և՝ թէ չունի-չգիտէ ահամ առնուն դարձուածը. բայց զոր Խորենացին գիտէ գործածել.—«Ոչ դէրեւն պատերազմին Արշակայ» (Խոր. բ. Դ.):

Իսկ Խորենացին—«Եցոյց հովիւ և առաջնորդ ժողովրդեանն ։—«Քանզի ի քաժանել լեզուացն ընդ ամենայն երկր, ոչ խուռն ի խուռն և ոչ անառաջնորդ կամ անդիլսաւոր այս լինէր ։—«Որպէս զի միւսանդամ տեսեալ զնոսա, առաջնորդ և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօք հաստատեցէ» (Խոր. ա. Դ. Ա. Սակո Բիւրասպեայ հաւաստին»: բ. Զ.):

ԺԶ. Խորենացին Բագրատունեաց մասին գրում է. «Որպէս կոչէին յառաջքան զուրանալն՝ Բագրատիա, (Տուբիա), Սեներիա, Ասուդ, Սափատիա, Վարազիա, Ենանոս» (Խոր. բ. ԿԳ.): —«Վարագաշեանը ասում է. «այդ անունները չկան բոլոր Հրէից գրոց մէջ, և ինչպէս կը կարծենք՝ Եբրայական չեն» (Քնն. պատմ. Հայոց. ա. մասն, եր. 173):

Իմ նպատակից դուրս կը լինէր այստեղ ընդդիմախոսել Գարագաշեանին, այլ՝ ինձ պէտք է միայն «Անեւն կանունը վերցնել՝ իբրև նիւթ. և հէնց այդ էլ բաւական կը լինի:—Ճշմարիտ որ «Հրէից բոլոր գրոց»—Եբրայական բնագրի և բուն Եօթանասնից թարգմանութեանց մէջ (ա. բ. գ. դ. Թագ. և ա. բ. Մնաց.) չկայ Անեւն անուն. սակայն Մնացորդաց Գրքերի Ասորականից այս նորագիւտ հայ թարգմանու-

թեան մէջ՝ չորս անդամ կայ Անեւն անուն. —«Եւ որդիք Անանիա Փաղատի և Յեսէ որդի նորա, և Անեւն անդ որդի նորա: Եւ որդիք Անեւն Եմեմեայ . . .»—«Եւ Յովագափատ և Սամաքիայ և Անեւն անդ որդի նորա և Թեսովին ։—«և Բենիամին և Յեշով և Շեմիա և Ամարիայ և Անեւն անդ ի քաղաքան» (ա. Մնաց. Գ. 21—22: բ. Մնաց. Ա. 13, 15):

Մխիթար արբայի, Զոհրաբեանի և Կ. Պոլսոյ (1895) տպագրութիւնները ունին միայն առաջին, երկրորդ և չորրորդ տեղերում՝ Անեւն կամ Անեւնիս, իսկ երրորդ տեղում՝ բնաւ. Բուն Եօթանասնիցը (Փրանսերէն) և Եբրայական բնագիրը՝ Անեւնիս տեղունին, դարձեալ միայն նոյն երեք տեղերում, Sécanja—Անեւնիս: Ուրեմն Անեւնիս, և չորս տեղում, մնացել է Ասորականից՝ առաջին հայ թարգմանութեան մէջ, որի ընտրելագոյն ներկայացուցին է պլրօք. Խալաթեանցի այդ հրատարակած «Գիրք ՄնԱՑՈՐԴԱՅ»:

Եւ Անեւնիս, ըստ իս, յայտնի կանոնվ փոխուել դարձել է Անեւնիս, ինչպէս, օրին. մախլաս—մալխաս, ոչխար—ոխչար, և այլն ։

Ենթագրում եմ, որ Անեւնիս կամ Անեւնիս՝ գիտէր Խորենացին իւր Ասորական բնագրի այս թարգմանութիւնից:

ԱՀԱ, իմ ցուցագրած բառերը և մանր գարձուածները, մի կողմից՝ չունի Եօթանասնից թարգմանութիւնը, միւս կողմից՝ սորանք հաստակացն էն Ասորական առաջին բնագրից այս հայ թարգմանութեան միայն և Խորենացու Հայոց պատմութեան համար:

* *

Խոստացայ չբաւականանալ միայն բառեր, գարձուածներ քաղել ցուցադրելով:

Մեզ զբաղեցնող ներկայ հարցի համար՝ Ծննդոց գրքում (Ժ. 2, 6, 24: Ժ. 10—13) գտնում ենք նոյն երեք որդոց ուղղագիծ ազգաբնութեան անունների կարգը՝ այսպէս:

ա) Սեմ, Արփաքսադ, Սաղա, Երեր . . .
բ) Քամ, Մեստրիմ:
գ) Յարեթ, Թիրաս:

Այսպէս է օտար ազգերի—թէ Եօթանասնիցը, թէ Վուլգաթան, նոյն է և՝ Եբրայական բնագիրը՝ Հայկական տպագիրները՝ է որ համաձայն են սորան, և է որ տարրերում, Օրինակ, Մխիթար արբայինը՝ համաձայն՝ Արփաքսադից յետում է Սաղա:—Զոհրաբեանինը՝ համաձայն է, սակայն ծանօթագրութեան մէջ, որի ընտրելագոյն ներկայացուցին է պլրօք. Խալաթեանցի այդ հրատարակած «Գիրք ՄնԱՑՈՐԴԱՅ»:

Եւ Սեմ, ըստ իս, յայտնի կանոնվ փոխուել դարձել է Անեւնիս, ինչպէս, օրին. մախլաս—մալխաս, ոչխար—ոխչար, և այլն ։

Ենթագրում եմ, որ Անեւնիս կամ Անեւնիս՝ գիտէր Խորենացին իւր Ասորական բնագրի այս թարգմանութիւնից:

Մակայն ա. Մնացորդաց Գրքում (Ա. 18, 24), այն էլ միմիայն Հայկականութեան, Արփաքսադից յետոյ գնում է կայնան, ապա Սաղա. բայց ծանօթագրութեան մէջ, «ԵԵր. Սաղա. բայց ծանօթագրութեան մէջ է. «ՅԵՐ. պակասի» (Կայնան):

Մակայն ա. Մնացորդաց Գրքում (Ա. 18, 24), այն էլ միմիայն Հայկականութեան, Արփաքսադից յետոյ գնում է կայնան, ապա Սաղա:—Մխիթար արբայինը՝ առաջինն անահամարում ունի բայց կայնան, Արփաքսադից յետոյ գնում է կայնան, և կայնան ծանօթագրութեան մէջ, «ՅԵՐ. Սաղա. բայց ծանօթագրութեան մէջ է. «ՅԵՐ. պակասի» (Կայնան):

1. Զոհրաբեանը ա. Մնաց. Գ. 21 տնահամարի մասին ծանօթագրում է. «Ամանք. Արփա որդի նորա.

—կ. Պօլսոյ յիշեալ տպագրութիւնը ևու երկու տնահամարումն էլ դնում է Կ-այէ-նան, սակայն ծանօթագրում է. «ՅԵԲՐ. Ավակասի»: Աչքիս առաջ ունեցած յիշեալ Թրանսերէն օրինակները՝ թէ Ծննդոց և՛ թէ Մնացորդաց այդ տեղերում բնաւ չունին Կ-այէ-նան:

Ուրեմն («Արփաքսագ ծնաւ») Կ-այէ-նան, և Կայինան ջնառ՝ պահուած է մի-այն հայերէն մի քանի ջեռագիրներում, որոնցից և անցել է տպագրիների մէջ՝ այս կամ այն ձեռվ, ոչ միակերպ և ոչ բոլոր պահանջուած տեղերում: Եւ ահա երրայական և Եօթանասնից բնագիր-ներից՝ հայ թարգմանութեան և՛ այս տարբերութեան իբրև միակ աղքիր՝ ներկայանում է բազմաշխատ պրօֆ. Գր. Խալաթեանցի իլյուսնձայած այս «ԳԻՐՔ ՄՆԱՅՈՂԴԱՅԱՐ», որովհետև բացի որ սուրանում (ա. Մնաց. Ա. 18, 24) Արփաք-սաթից յնայ անշեղ գալիս է Կ-այէ-նան, և ապա Սաղա¹, այլև այդ արդէն ամ-բողջական տարբեր բնագրից և եղական թարգմանութիւն լինելու բոլոր առան-ձնայատկութիւններն ունի պահած:

Առանց բուն հարցից շեղուելու՝ հարկաւոր եմ՝ համարում դիտել տալ, որ այս օրինակի յիշեալ 24 տնահամարը թէ տարբեր է (մեր) միւս օրինակներից և՛ թէ միակ ուղիղն է՝ Մեմայ սերնդոց ուղղագիծ ազգաբանութեան համար մինչև ցԱրփահամ:

Գուցէ առարկող լինի՝ թէ Կ-այէ-նան կարող էր ուրիշ ջեռագրից իբրև վրի-պակ անցնել սորան, ինչպէս և՛ սորանից՝ ուրիշին: Թէպէտ թոյլ առարկութիւն, որովհետև փաստը մնում է փաստ, այ-սու ամենայնիւ կանխելով ասեմ, որ հազիւ յօդուածիս վերջին եղբակացու-թեան հասած՝ այդպիսի առարկութիւնը պիտի դառնայ անտեղի:

Խորենացին նոյի երեք որդոց սերն-դոց ուղղագիծ ազգաբանութիւնը որդի ի հօրէ շարում է իւր Հայոց պատմու-թեան մէջ, իւրաքանչիւրինը ց11 պորտ. սակայն առնում է ոչ թէ ո. Գրքից, որը «զիւրսն» — Մեմայ ցեղը վերցրել է, իսկ միւսները՝ բեկլ—թողել, այլ՝ «որպէս գհաւաստին ի հնոց պատմու-թեանց, մերով մասամբ ամեննին ան-սուտ» (Խոր. ա. Ե.): Եւ դնում է այսպէս.—

- ա) Սեմ, Արփաքսար, Կայիան, Սաղայ, Երեր . . .
բ) Քոմ, Քուչ, Մեսարեմ, Ներբովթ, Բար . . .
գ) Ցարեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ . . .

Խորենացին Քամայ և Յաբեթի՝ իւր բերած այս ազգաբանութեան մէջ թէ-լից (Ներբովթ) և Հայկից յետոց եկող-ների համար վկայութիւն է բերում Աբիւդենոսից. իսկ Յաբեթի ազգաբա-նութեան համար՝ ողբիւր է ցոյց տալիս և՛ Մար Արաս Կատինայի բերած Քամա-կէտիկանցից, այսպէս «Փամանա-կագիրը», այսպէս. «Նինոս (որդի) Ար-բեկայ, Քայազայ, Արբէեզայ, Անէերայ, Բարեայ, Բէլայ, Նոյնպէս և զմերն՝ ի Հայ-կայ մինե ցարայն . . . թուէ այսպէս. Արայն գեղեցիկ Արամեայ, Հարմեայ, Գեղամեայ, Ամաեայ, Արամայիսեայ, Ա-րամանեկայ, որ եղեւ հակառակ Բէլայ, Եւ զայս մեզ Արբւդինս, յիւրում առաջ-նում արձանականի ի մանր ազգաբա-նութեան ասէ»: — Արդ ի նոյն մատենէ (Մար Արտասի) սկսեալ ասացից. Յապե-տոսթէ, Մերսդ, Սիրաժ, Թակլադ, որ է Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ . . . Հայկ, Արմենակ, և զայլսն ի կարգի» (Խոր. ա. Ե. Թ. տես և՛ ԺԲ.):

Խորենացու բերած այս ազգաբա-նութեան (Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ) մասին Կարագաչեանը, առանց արժանին ուշադրութեան գրում է.

«Յայտնի է թէ այս ազգաբանութիւնը Ծննդոց է» (Քնն. պատմ. Հայոց. ա. մասն, Եր. 133): — Այդ անունները յիրաւի կան Ծննդոց Գրքի մէջ, սակայն՝ ոչ նոյն կարգը ազգաբանութեան, այնտեղ Գա-մեր և Թիրաս եղբայրներ են, մինչ Խո-րենացու ցանկում՝ հայր և որդի . . .

Խորենացին իւր բերած այդ ճիւղա-գրութիւնից անմիջապէս յետոց գրում է. «Արդ զկայնան լուրջուր է նոյն ամենայնք ի ֆամանակագրացն գրեն, և ի Սեմայ Երրորդ: Նոյնպէս և զիթիրաս լուրջուր է նոյն և ի Յաբեթաթայ՝ Երրորդ. թէպէտ ըստ մերում թարգմանութեան (Սոս-ուածանչնի) ոչ ուրեք ի բնագրի գտանի: Իսկ զՄեստրայիմ լուրջուր է նոյն և Եր-րորդ ի Քամայ՝ ոչ ի մերում թարգմա-նութեան և ոչ ի ֆամանակագրաց ուրեք կարգեալ գտանեկը: Այլ այսպէս զա-կարգեալ գտաք ի յուշմագունէ ումենէ և յընթերցասիրէ Ասորուոյ¹: և հաւա-տարիմ թուեցաւ մեղ» (Խոր. ա. Ե.):

Կայնան «լուրջուր է նոյն» լինելու մասին Խորենացին վկայում է թէ «ա-մենայնք ի ֆամանակագրացն (և՛ ըստ մե-րում թարգմանութեան) գրեն»: ուրեմն ակներկ է որ Խորենացու «թարգմանու-թեան» բնագրիը չէր ինչ որ է յայտնի Եօթանասնիցը, որը չունի զկայնան՝ լու-րջուր է նոյն: Բայց Թիրաս «լուրջուր է նոյն» չի գտնուում Խորենացու «թարգմանու-թեան բնագրի» ոչ մի տեղում, ինչպէս չկայ նաև Եօթանասնից օրինակում, այլ միայն ֆամանակագիրների մօտ: Իսկ Մեստրայիմ «լուրջուր է նոյն»՝ յիրաւի չկայ ոչ «մեր թարգմանութեան մէջ» և ոչ որ և է ֆամանակագրի մօտ նշանակ-ուած, այլ որ առնում է «մի ոմն յուշ-մագոյն և յընթերցասիրէ Ասորուոց»:

Այսպէս, Խորենացին զկայնան, ըզ-

թիրաս, և զՄեստրայիմ «լուրջուր է նոյն»՝ կարգելու համար՝ աղբիւր է ունեցել— առաջինի համար՝ ո. Գրքի՝ իրեն ծանօթ Ասորական առաջին բնագրիրը—կորած թարգումը կամ գորանից այս հայ թարգմանութիւնը, և ֆամանակագիր-ներ: Երկրորդի համար՝ միայն ֆամանա-կագիրներ: Խոկ Երրորդի—Մեստրայիմի համար՝ զյուշմագոյն Ասորին միայն:

Այլ և, Խորենացին մի այլ տեղ (ք. ԿԲ.) գրելով. «ՅԱՐԱՄԱՅ ՀԱՄԵՐՈՒՐ ԱԿԵՐՈՒՐ ՆԱՀԱՎԵՏ մեղ զԱՐԱԿԱՄ ԱՍԱ- ՈՒԱԾԱՅԻԲՆ ԱԿԱՄՈՒԹԻՒՆՔՆ ցՈՒցԱՆԵՆ»: — ոչ մի տարակոյս չի թողնում, որ այս և միւս տողերի գրելու ժամանակ Հայկա- կան «թարգմանութեան բնագրը» տա- կաւին չէր Յունական Եօթանասնիցը, և ոչ Երայականը, քանի որ ըստ զուգաթայի՝ Աբրահամ ՀԱՄԵՐՈՒՐ ՆԱՀԱՎԵՏ է, պա- կասելով Կայնան, և ոչ թէ «ՀԱՄԵՐՈՒՐ ԱԿԵՐՈՒՐ ԱԿԵՐՈՒՐ ՆԱՀԱՎԵՏ»: Այս մի և նոյնը և՛ ա- պացոյց է՝ որ մեր ըստ Եօթանասնից թարգմանութիւնը (Արբագրութիւնը) կատարուած է մի այլ նախնական հայ թարգմանութեան հետեւողութեամբ, որից առ այժմ գտնուած ամենամեծ մացորդն է յիշեալ Զեռագիրներում պահուած Մնացորդաց Երկու ամբողջ Գրքերը:

Եւ ի նկատի առնելով, որ նոյնպէս Ղուկաս Աւետարանիչը Քրիստոսի ըստ մարմոյ Ծննդաբանութեան մէջ Արփաք- սագից յետոց գնում է զկայնան, լուրջուր է նոյն և ապա Սաղա (Գ. 35—36), և որ Ղուկասը Ասորուոց Անտիոքացի՝ հաւանա- կանաբար Ասորի էր, և Ասորէրէն գլու- խը Աւետարանը, — ակներս է թէ սորա- պիտիրը նոյնպէս չէր ինչ որ յայտնի պահիւրը նոյնպէս չէր ինչ որ յայտնի պահիւրը նոյնասնիցը, — հետեւում է, անտա-

1. «Եւ Արփաքսար ծնաւ զկայիանան, և Կայիանան ծնաւ զկայլայ, և զայլայ ծնաւ զեբերը . . .» (անդ):

1. Խորենացու՝ զյուշմագունէ ումենէ և յընթերցասիրէ Ասորուոյ՝ վերցրած լինելու մասին լիուզը՝ միայն Քամայ նիւղի—յատկապէս Մեստրայիմի համար պետի հասկանալ:

րակոյս, որ («Արփաքսաթ՝ ծնաւ») պայմանական ծնաւ՝ և Ասորական հին աղբերից է ծագում:

Եզրակացութիւն. ա) Պրօֆ. Գր. Խաչաթեանցի իլոյս ընձայած «Գիրք ՄՆԱ-ՑՈՐԴԱԾ» ու «Հայերէն լեզուի ամենահին՝ թէ չասենք՝ անդրանիկ դրուածքներից մէկը պիտի ընդունել»; բ) «Թարգմանուած է, հաւանականաբար, Ասորական առաջին բնագրից — Թարգումից»; գ) «Արփաքսաթ՝ ծնաւ պայմանական ծնաւ» պիտի ունենար Խորենացուն սկզբում ծանօթ բնագրիրը — կորած թարգումը»; դ) Խմ քաղած և ցուցադրած բառերը, մանր դարձուածները և մտքերը՝ հասարակութաց են Մնացորդաց

Դրքերի մէջն այդ նորագիւտ հայ թարգմանութեան և Խորենացու Հայոց պատմութեան համար, ե) Հետեւաբար, Խորենացին է թարգմանել Մնացորդաց այդ Դրքերը Աստուածաշնչի Ասորական հին բնագրից՝ առաջին հայ թարգմանութեան ժամանակ, աշխատական Մեծ Թարգմանիչներին — Ս. Սահակյա և Մեսրովքայ, իբրև Սահակ Պարթեհի «Քէնը և թարգմանութեան և արուեստագործութիւն» վարժ առաջադրութիւն աշակերտը. — «Բայց քանզի անգէտք էին մերում արուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասնորոյ առեալ Մեծին Սահակյա և Մեսրովքայ՝ (մեծընան) զմեզ առաքեցին յԱղէքսանդրիայ՝ ի լեզու պանծալի . . .» (Խոր. գ. ԿԱ.):

11 Փետրվարի 1905 թ.

ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. ԴԱՐԻ ՍՈԱԶԻՆ ՔԱՌՈՐԴԻՑ ՄԱՏԵՆԱԳԻՐ

ԽՈՐԵՆԱՑԻՆ է ԱՍՏՈՒՄՄԱՇՆՁԻ ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐՔԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՂԸ ՍՍՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՆԱԳՐԻՑ—ԹԱՐԳՈՒՄԻՑ,

II.

Այս վերնագրով առաջին յօդուածս անցած տարի լոյս տեսաւ «Ճարագա շաբաթաթերթում» (1905 թ. № 12, 13), և Վենետիկի Միիթարեանց «Բազմավիճակում» (Սեպտեմբեր):

Այդ յօդուածի գրելուս մտքովս անցնում էր, որ եթէ Խորենացու բծախնդիր դատախազները յամառուել ուղեն, շատ-շատ՝ պիտի դառնան այժմ էլ ասեն թէ հանդէս հանուած Մնացորդաց Գրքերի թարգմանութիւնը յետին ժամանակի գործ է. այլ ևս ուրիշ ասելիք չեն կարող ունենալ. Յօդուածի հրատարակութելուց յետոյ մեր հայր Եղիա վարդապետն ևս ուրախացած՝ նոյն կարծիքը յայտնեց՝ Խոկ պ. Գր. Վանցեանը՝ գրեց ինձ (22 Ապրիլի 1905 թ.) — «Մեծաւ հաճութեամբ և խորին ուշագրութեամբ կարդացի Զեր գեղեցիկ յօդուածը Տարագում. . . Փառք Աստուծոյ, որ գեռ կան անհատներ Խորենացու իսկութիւնը ճանաչող, և աւելի ևս փառք, որ ահա գտնելում են փաստեր

ուրիշներին էլ նոյնը ցոյց տալու Զեր գրածները հեղեղելու համար հիմա պէտք է ցոյց տալ, որ Մնացորդաց Գիրքը աւելի յետին ժամանակի գործ է, այլապէս՝ Խորենացու և Մնացորդաց Գրքերի առնչութիւնը՝ անկասկածնելի է. այսինքն Խորենացին նա է, ինչ որ էր և եղել է, որին սակայն չեն ուզում ճանաչել...»
«Ուրիշ ասելիք չեն կարող ունենալ»:
Խարուած ենք:

Հ. Յ. Տաշեանը թէպէտ համոզուած շեշտում է՝ որ Մնացորդաց Գրքերի այդ թարգմանութիւնը «յայտնապէս մնացորդ մնն է ս. Գրոց նոյն իսկ նախնական թարգմանութենէն յԱսորւոյն»: — Ուրեմն ոչ յետին ժամանակի գործ». օրհնեալ է Աստուած: Սակայն նա ուրիշ անսպասելի ապիկար բան է առարկում. «Բարդուղիմէսս եպիսկոպոս Գէորգեանի փորձը՝ զԽորենացի թարգմանիչ գտնելու այս հին բնագրին, պէտք չկայ շեշտելու, անյաջող է, ճիշտ ինչպէս անտեղի է՝ թէ և յաճախ կրկնուած՝ զԽորենացի թարգ-

1. Արդարութիւնը պահանջում է վկայել՝ որ հ. Եղիա վարդապետն է եղել Մնացորդաց այդ հնագոյն թարգմանութիւնը գործ թարգմանութեան տարբերութիւնը նկատող և ի յայտ բերողը, այլի պրօֆ. Խալաթեանցի ուշադրութիւնը:

2. Սա յետոյ հրատարակեց. «Հստ իս՝ ապացուցուած է, որ Մնացորդաց Գրքի հնագոյն թարգմանութիւնը կատարել է Խորենացին և շատ ոճեր ու ձեռք այնտեղ առնուած են ուղղակի Գողթան երգերից («Կոհել-կոփել»). համն առնուլ » և այն). ան «Խորենացին է Մնացորդաց Գրքերի առաջին հայ թարգմանութիւնը՝ Ասորերէնթը». Խոր. 1905 թ. № 12—13. Բարգ. եպիսկոպոս Գէորգեան» («Պատմութիւն Քերականութեան արեւելա-Տարագ», էլ. 134. Տփիսի, 1906):



մանիչը ըսել Եւսեբեայ Քրոնիկոնին, անոնվ
որ Խորենացին գիտէ այս գրքերը և կը
գործածէ » (Հանդէս ամնօրեայ). 1906,
թիւ 1. Յունուար, եր. 4):

Կամի ասել թէ՝ Խորենացին չէ դու-
րա թարգմանողը, այլ՝ դուրծ է ածել
ուրիշին այդ թարգմանութիւնը:

«Խորենացին է Մնացորդաց այդ
Գրքերի առաջին հայ թարգմանողը»
Գրելուս համար՝ ես նախ քաղել ցու-
ցադրել եմ բառեր, գարձուածներ, նա-
խադասութիւններ և մտքեր, որոնք հա-
սարակաց են միայն այդ թարգմանու-
թեան և Խորենացու Հայոց պատմու-
թեան համար։ Օրինակ, «Հայեց Տավու

զոր Խորենացին առել է վիպական հնաւ-
գոյն երդից—«կռել կոփել զդուռուն Եր-
ուանդայ արքայի», մտցրել է և՝ իւր
Հայոց պատմութեան մէջ և՝ Մնացոր-
դաց Դրքերի է-ը այդ թարգմանութեան
մէջ։ Բատ այսմ և միւսները—էտոն, էտոնց
մաքեան նախառորաց, ճառու+ զինուիլը։ նէ-
զակառուրուր։ իսու+ զառեալը զայշտարհն է հայր-
ին—ընդ հարիւ+ կացուցանելը սպասարկեա-
ծերածոյ։ Գործառորաց։ հրաման գումարու պղնձոյ
և եցանոյ, ժայռի և +արք։ ճարրուրաց։
իմեագորած առաջարի յառաւիսոցն։ Ճի իսուուի+
զհամ առնու-լու այսին։ հասագութաղուր-է։ ածելն
ու գերին։ առաջնորդ։ Սէնեւիլու։ Կայինան
լորրորդ է նոյէ։ Աբրահամ +առներուրդ ա-
ռաջներորդ նահապետ։ Այն ինչ՝ Խորենա-
ցուց առաջ համարուած գրողները և
կրտսէր թարգմանիչները և ամբողջ Եօ-
թանասնից մեր թարգմանութիւնը,—
զոր գիտէ Խորենացին և նոյնուի «կը
գործածէ», —չունին գորանք այդպէս-
եւ, ընդհակառակն, ինչ որ Եօթանաս-
նիցը ունի, օրինակ—կատարճուիլը, գոր-
ծուելից»։ բնաւ չունին ոչ Խորենացին և
ոչ Մնացորդաց Դրքերի Ասուրական բնա-

1. « Հատուած՝ զնացեալ Վարդէս մանուկն ի ծուհաց գաւառէն, զՔարսահ գետով, եկեալ նստեալ զՃրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔարսահ գետով, կռել Կոփել զդուռն երուանդայ արքայի » (Խոր. թ. Կի.);

Տ. Խորենացի, գ. ԿԱ:

3. Հովհե շաբաթաթերթի մէջ (1906, № 7) այստեղում խոշոր սխալմունք է տեղի ունեցել:

Հ. Տաշեանի ուշադրութիւնը։
Հ. Տաշեանի ուշադրութիւնից ան-
ուշտ վրիպում է և այն հանդամանքը՝
ո Հայոց Վկիպասանքից մնացած Վարդ-
էսի երգի Ֆանի պահող—մեզ աւան-
ողն է Խորենացու Հայոց պատմութիւ-
ու¹, և ոչ թէ Մնացորդաց այդ հնագոյն
ժարդմանութիւնը կամ մի այլ ոք։ Հե-
ևաբար, օդտուող բանաքաղը՝ Մնա-
որդաց այդ թարդմանողն է. ի հարկէ
յն դէպքում՝ որ եթէ այդ թարդմա-
ողը և յիշեալ պատմութեան հեղինակը
ինէր մի և նոյն Խորենացին, հակառակ՝
նչ որ վկայում են փաստերը և ինչ որ
համապուած պնդում եմ։

Հ. Յ. Տաշեանի գծուծ առարկու-
թիւնը նոյնչափ անզօր է շօշափելու այն
յօդուածիս աստղանիշով բաժանուած
երկրորդ կէսը, ուր ցոյց եմ տուել, որ
Կայնան լրբարդ է նոյն « ասելու համար՝
Խորենացու աղբիւրն էր Ասորական հին
անագրից ի-ը այդ թարգմանութիւնը՝
Անզօր է շօշափելու, որովհետև Խորե-
նացուն Ը. Թ.-րդ դարերում տեղաւո-
րել ջանացողները անշուշտ դիտեն՝ որ
այդ դարերից շատ առաջ, ո. Մահակայ
և Մեսրովբայ կենդանութեան օրերից
հետէ՝ մեզանում անպայման իշխում
էր « առոյժ ըրնակն » Եօթանասնից թարգ-
մանութեան², ուր Կայնան կայ՝ Ադամից
լրբարդ, բայց չնա- և՝ նոյնից յետոյ 5*

Բառերի և ոճի նոյնութեան մի հա-
րուստ օրինակ ևս, յետոյ նկատած.—
«Եւ ահաւասիկ Գործառնութեան վայտա-
հարիդ ծառայից քոյ հրաման պոտած տալ
վսեստակ ցորենոյ քոռու քսան հազար...
այր իմաստուն հանճարեղ ի գործս ուիշոյ
և արժանոյ է աղնձոյ, յերիանոյ, ի գործ
փայտի և աարի... ի գործ կուել կոփել
ի քանդակել... Եւ հրաման նա Սողոմով

Ժողովել զամենայն եկս հարաբերաց » (բ.
Մնաց. թ. 10, 14, 17):

Եօթանասնիցը—«Եւ գոյծ ժողովեցն» որպէս
հատանեն զփայտն՝ ի կերակուր ետու
հաց՝ ոռնիկ ծառայից քոյց՝ քսան հա-
զար քոռ ցորենոյ . . . այլ իմաստուն,
որ գիտէ զհանճար . . . գիտէ գործել
զոսկի և զարծաթ, և զպղինձ, և զեր-
կաթ, և զքարինս և զփայտս . . . և քան-
դակել զքանդակս . . . Եւ ժողովեաց Առ-
զոմոն զամենայն արս պանդուխտս յԵ-
րուսազէմ» (անդ):

Այսպէս, Եօթանասնիցը ահա թէ տարբեր է և' թէ չունի առաջինում ընդ-դնուած բառերը, բառածելերը և ոճը:

Իսկ Խորենացին — «հրաման ուսոյ» . . .
անարուեստից դորժառարաց . . . արուես-
տաւոր դորժառարաց վայսոյ և ժամով, պղնձոյ
և երկանոյ . . . ի վերայ իւրաքանչիւր գա-
ռուց զընտիրս է ճաշառացաց վարդապետս
կարգել . . . էրեւ էրիւ զգուռոն երուան-
դոյ արքայի » (Խոր. ա. ԺԶ. բ. ԿԵ.) :

Բարեբախտաբար՝ հիմնական երկու
պայմաններ ամեն կասկածից վեր են.
առաջին՝ Մնացորդաց այդ թարգմանու-
թիւնը «Հայերէն լեզուի ամենահին՝ թէ
ասենք՝ անդրանիկ գրուածքներից մէկն է
ընդունուելու», և՝ «յայտնապէս մնա-
զորդ մըն է ս. Դրոց նոյն իսկ նախնա-
կան թարգմանութենէն յԱսորւոյն»: Իսկ
Երուսաղէմի օրինակի յիշատակարանը,
հնչպէս տեսանք, Սահակ Պարթևին է
ընծայում այդ թարգմանութիւնը: Երկ-
որդ, այդ թարգմանութեան և մայն
սորենացու Հայոց պատմութեան բա-
ղարձակ առէլքով՝ մտքերի, լեզուի և ոճի,
առերի և բառաձևերի: Խորենացու քա-
մարտիկ հակառակորդները—Ծաշեան,
Խալաթեան՝ սուրանք վկայելուց յետոյ,
այժմ այդ թարգմանութիւնը Խորենա-
ցունը չհամարող և ինձ ընդդիմախօս
ողը՝ պարտաւոր էր նոյնքան համարժեք
իսաստերով ապացուցանել—նախ՝ թէ
սորենացունը չէ. երկրորդ՝ թէ հապա

հւմը կարող է լինել «Սուտ Խորենացի» համբաւողների համար՝ փախուստի միակ հնարաւոր ելքը. եթէ սակայն երբէք յաջողին:

Ամբողջ մեր Աստուածաշնչի առաջին թարգմանութիւնը Ասորերէնից, այլև յետոյ սրբագրութիւնը ըստ Եօթանասնից՝ ո. Սահակայ և Մեսրովբայ և աշակերտաց սմանց ընծայելով հանդերձ, Մնացորդաց այս թարգմանութիւնը բացարձակ աղաղակում է և բողոքում ի նպաստ Խորենացու դատիւ Եթէ Եւսեբեայ Քրոնիկոնից, Նազիանզացուց, Սոկրատից, Անանիա Շիրակացուց, և այլն, ասացին թէ օգտուել բանաքաղել է Խորենացին, սակայն գիտենք որ դոքա ուրոյն կան, և կարող էինք առ ժամանակ, —քանի որ Խորենացու ժամանակի խնդիրը դրել էին վէճի տակ, —կարծիք ների բաժանուել գրող և ընթերցողներու Օրինակ. պրօֆ. Դր. Խալաթեանց, Կարբիէր՝ կը պնդեն թէ Խորենացին բանաքաղել է Սոկրատի հայերէն յետնագոյն թարգմանութիւնից, կամ Անանիա Շիրակացուց. իսկ ուրիշներ, ընդհակառակը, ինչպէս Նորայր Ն. Բիւզանդացին, կը պատասխանեն թէ՝ վերջիններն են բանաքաղել Խորենացուց։ Բայց Մնացորդաց Գրքերի՝ Ասորերէնից այս հնագոյն թարգմանութեան վերայ Խորենացու իրաւանց այդպիսի մի բաժանորդ՝ զայլ ոք անուանել չենք կարող։ Մերժամանակի զարգացման հասած իրաւագիտութիւնը —ուրեմն հասուն բանականութիւնը՝ թելագրում է, որ իրաւունքի կամ սեպհականութեան մասին պահանջյարուցանողը ինքը պարտաւոր է ներկայացնել ապացոյց, դօկումէնտ։ Իմ յօդուածով Խորենացին արդէն առեւան հանեց իշխան միայն առանձինագուուի առուելիքի, ոճի, խօսքի և մտքի նմոյշներ, հսկական դօկումէնտներ, որ Մնացորդաց Գրքերի այս հնագոյն և «անդրտակի» հայ թարգմանութիւնը՝ ի-ը ուղ-

հայուն քառերեսի գործ է։ Հարիւրաւոր Տաշեաններ անզօր են այլ ևս խեղաշթիւրել փաստերը և ժխտել Խորենացու իրաւունքը¹։

Ոչնչ չի արգելում սակայն ընդունել՝ որ Խորենացին մինչև իւր կեանքի վերջը յաւելումներ է արել։ Նոյնպիսի յաւելումներ և յապաւումներ արել են և զանազան ժամանակներում արտադրող և «արբազրողները», ինչպէս խոստավանում է ընտրելագոյն կարծեցրուած Լամբրոնացու օրինակից արտագրութեան ստացիչ «պիտականուն Մովսէսը»։

Խորենացին ս. Սահակ Պարթևի (առենադպիրը) «Դրին» էր և Աստուածաշնչի Ասորերէնից թարգմանութեան առաջ դրիննից՝ Խորենացու Հայոց պատմութիւնը, այլև «Ողբը» դրուած են Վարդանանց պատերազմից ոչ յետոյ, երբ Խորենացին ողբում—աղաղակում էր. «Անտիոքոս ըննալատէ թողուլ զօրէնս հայրենիս, և Մատաթիայ ոչ ընդդիմակայէ, պատերազմ զմեղ շուրջ պատեաց, և Մակաբէ ոչ փրկէ։ Այժմ մարտք իներքուստ և արհաւիրք արտաքուստ։

2 Փետրվ. 1906 թ.

արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց, և խորհրդականն չէ ի միջի՝ որ իրատէր և յարմարէր ի պատերազմ։ Աւազ զրկանացս . . . Եւ ոչ գիտեմ, եթէ զինքրդ յարմարեցից զողբերդութիւնս, և կամ զով արտասուեցից։ Զհէքն իմ մասուկ և թագաւոր, զխորհրդակցութեամբ վատթար ազգաւ ի բաց ընկեցիկն . . . յաթուոյն ի վայր կործանեալ, եթէ զիս ինքն, զի վերացաւ ի գլխոյս փարթամացուցիչ պսակըն գեղցիկ և կենցաղօգուտ։ Զհայրն իմ և Քահանայապետ . . . եթէ զիս . . . Զծննդն իմ աղբիւր վարդապետական . . . եթէ զիս . . . Զաշխարհիս եկեալ ազմոս, եթէ զապագայիցն ակնկալութիւն»։ Եւ երբ տակաւին Սահակ Բագրատունին յիրաւի «մասուկ, տհաս, խակ» պատմութիւնը, այլև «Ողբը» դրուած

Էստ այսմ, յետ եմ վերցնում Խորենացու Մեկենասի մասին իմ վաղուց, — երբ խարխափում էին Խորենացու ապրած ժամանակի ինդրի շուրջը, — յայտնած կարծիքս², այն՝ որ նախորդ պայմաններում ընտրելագոյնն էր (Հովիւ, 1906 թ. № 7):

ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. ԴԱՐԻ Ս.ՌԱԶԻՆ ՔԱՌՈՒՐԴԻՑ ՄԱՏԵՆԱԳԻՐ

ԽՈՐԵՆԱՑԻՆ է ԱՍՏՈՒՄԱՇՆՁԻ ՄՆԱՅՈՐԴԱՅ ԳՐԲԵՐԻ Ս.ՌԱԶԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՂԸ ՍՍՈՐՄԿԱՆ ՍՈՒԶԻՆ ԲՆԱԳՐԻՑ—ԹԱՐԳՈՒՄԻՑ։

III.

Պրօֆեսոր Գր. Խալաթեանցը 1899 թ. տպագրութեամբ ի լոյս ընծայեց Երուսաղէմի Հայոց ս. Յակովիւսանց վանքի մի ձեռագիր Աստուածաշնչից ա. բ. Մնացորդաց Գրքերը, բազգատութեամբ ս. Էջմիածնի մատենադարանի № 183 Զեռագրի հետ։ Ինը պ. Խալաթեանցը իւր Յառաջաբանում կարծիք յայտնեց՝ թէ այդ եզական թարգմանութիւնը կատարուած պիտի լինի Ասորական առաջին բնագրից—թարգումից, և թէ այդ «թարգմանութիւնը ամենայն հաւանականութեամբ հայերէն լեզուի ամենահին թէ չասենք՝ անդրանիկ գրուածքներից մէկն է ընդունուելու, որ հասել է մեր ձեռքը»։ Եւ Հ. Յ. Տաշեանը, ինչպէս տեսանք, վկայեց թէ «յայտնապէս մնացորդ մլն է ս. Գրոյն նոյն իսկ նախնական թարգմանութենէն յԱսորւոյն»։ Իսկ ես գտայ, խոր համոզուած եմ, որ այդ հայ «անդրանիկ» թարգմանութիւնը պատկանում է Մովսէս Խորենացու գրչին։ հետեւաբար՝ Խորենացին ե. գարի առաջին քառորդում ս. Սահակ Պարթևի «Դրին» էր և Աստուածաշնչի առաջին հայ թարգմանութեան առաջ դրիննիւը։

Ինչպէս յայտնի է, նախնական հայ թարգմանութիւնից միայն Մնացորդաց Գրքերի այդ երկու ամբողջ օրինակն էր գտնուած, մին Երուսաղէմի Հայոց վանքում և մին ս. Էջմիածնի մատենադա-

1. Արքի առթիւ իրաւամբ նկատել եմ՝ որ չ. Յ. Տաշեանին պակասում է «արդար խօսելու» ցանկութիւն։ յաւելացըք և ստոր արաբած չ. Ա—երի թելադրութիւնները։ Տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկալ», թ. հատոր եր. 16. և «Հանդէս ամսուեալ», 1903, չոկտ. կազմի երկրորդ եր. պատասխանը Խմբ.։

2. Տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկալավ», թ. հատ. եր. 1—5. և թ. հատ. եր. 1—5.

Նակլում է ըստ Եօթանասնից թարգ-
մանութեան։ Ինձ համար անբացատրելի
մմաց երկու տարբեր ընագիտների և
տարբեր գրիչների այսօրինակ ընդլաւու-
նումը։ Զեռագիրը (№ 181) գլուած է
ԶԿԶ=1317 թուին։ Վերակազմել են
1615 թուին։

Խմ քաղած և ցուցադրած այն կտորներից (տես եր. 4—8, 14—15), որոնք, ասացի, հասարակաց էն Խորենացու Հայոց պատմութեան և Մնացորդաց Գրքերի Ասորական առաջին բնագրից այս հայ թարգմանութեան համար ճիշճու, իմ գըտած այս երրորդ օրինակ Զեռագրում գտնվում են երեքը—«Սափատիա յԱրքիտաննական»—«Ծննդագրեցան և կան ի ճապետան լատասուրունեան Խորայէլացւոց և Յուրայ»—«Խաւսել սկսաւ Շաւուզ ընդ վէնակին իւրում»—«Իրեւ ետես վէնակիւն թէ մեռաւ Շաւուզ» (ա. Մնաց. Գ. 3. Թ. 1. Ժ. 4, 5): Բացի այն՝ որ Աւելնելայէ և Կայինունէ մասին նոյն է ինչ որ առաջին երկու Զեռագիրները։ Սակայն «առաջնորդ» բառի տեղ (ա. Մնաց.

Նից, նման Խալաթեանցի բաղդատած
Եջմիածնի № 183 Զեռագրին։ Միւսները
չկան, որովհետեւ, ինչպէս ասացի, ոռ-
րանում փոխւում են բնադիրները։ Բայց
կայ սորանում, ինչպէս միայն և՛ առա-
ջին երկու Զեռագիրներում, մի այլ ե-
ղական տարրերութիւն ևս, որի վերայ
յետոյ ուշք դարձրի և դարձնում եմ
այժմ ուրիշների ուշագրութիւնը.—

Սերբան. այն տեղի անունն է, ուր
1871 թուին Նապոլէօն Գ. Ֆրանս—
Բրուսական պատերազմում իւր հետ
հարիւր հաղարանոց բանակով գերի ըն-
կաւ Գերմանացւոց ձեռքը Հանրագի-
տակ և այլ բառարանները չգիտեն ուրիշ

1. Կայ Սեղառ, Ապառաժ Արաբիայի քաղաք, մոտ ի Պաղեստին: Cédar, v. de l'Arabie Déserte, près de la Palestine» (Diction. Larousse):

տնահամարում՝ ոչ մի Զեռագիր չունի
կայնան, այլ Արփաքսադից յետոյ գալիս է
Սաղը. «Եւ Արփաքսադ եկեաց ամս ձլե,
և ծնաւ զՄաղա . . . » :

Մնացորդաց Գլքում կրկնում է
Նոյի երեք՝ որդոց ազգաբանութիւնը։
Մեր մատենագրաւանի Զեռագիրներից
երեսուն եւ երկու հատը—№, № 153,
155, 156, 157, 159, 161, 162, 164,
165, 166, 167, 168, 169, 170, 171,
172, 173, 174, 175, 176, 177, 178,
179, 180, 181, 182, 183, 184, 185 և
(Գէորգեան ցուցակ, №, №) 16, 17, 18—
ունին. «Եւ Սրբաքսադ ծնաւ զկայնան.
և կայնան ծնաւ զՄաղա Որդիք Սե-
մայ Ելամ և Ասուր. և Արփաքսադ, Կա-
յնան, Սաղա . . . » (ա. Մնաց. Ա. 18,
24). Բայց պէտք է ծանօթացնեմ, որ
այս Զեռագիրներից ոմանք մի կամ միւս
տեղում, օրինակ № 153՝ կայնան ունի
տողամիջում. № 155՝ լուսանցում. № 157՝
փակագծում: Իսկ №, № 157, 162, 175
և 185՝ վերջին տնահամարում (24) չու-
նին կայնան: Կան և այլ Զեռագիրներ՝
որոնք լրիւ չեն. կայ և այնպիսին, որից
թերթեր են բնկած:

Ուրեմն չկայ և ոչ մի հատ հայ Զեռ-
ուագիր,—հաւանական է թէ և ուրիշ
մատենագարաններում,—հարկաւ և ոչ
մի տպագիր՝ որ Կայուանի մասին համա-
ձայն լինէր Եօթանասնից բնագրին, Եր-
րայականին կամ Վաղաթային, որոն-
ցում Արփաքսագից յետոյ պակասելով
Կայնան՝ Աբրահամ Հանելովդ Նահապետ
է, այլ ոչ թէ «+անելուրդ աւազնելուրդ»

Որովհետեւ ամբողջ այս շարադրութեանս խորհուրդն է ցոյց տալ Մովսէս Խորենացու ապրածիւն նորա! Հայոց՝ պատմութեան գրութեան ժամանակը, իրբեկնիք բանիս՝ գնում եմ՝ այստեղ յիշեալ պատմութեան հետևեալ ուշագրաւ մի հատուածը, որը ինձ թուում է թէ պիտի Պարսից Վռամ երկրորդի (Ե.), — որը մահացու հարուածով «զքէն» վրիժուց ինդրեաց ի մերմէ աշխարհէս » (Խոր. գ. ԾԶ.), բառնալով Հայոց թագաւոչ բութինը, — թագաւորութեան (421—442) տարիներում գրուած լինի, երբ Խորենացին օտարութիւնից նոր էր վերադարձել հայրենիք, կամ թէ, աւելի հաւանական է՝ որ հէնց այն օտարութեան մէջ գրած էր։ Ահա այն հատուածը։

«Եւ գունդս և պահապանս դրան
արքունի պատրաստէ (Վաղարշակ) զջոր-
սըս, զմի մի իւրաքանչիւր վառելովք ի
նոյն հին զարմից թագաւորացն՝ որ ի Հայ-
կայ, որ ընդ ժամանակս ժամանակս ժա-
ռանդութեան ի հարանց ստացեալ գեւդո
և դաստակերտս։ Խոկ աստուրեմն Պարսկաց
նահանգնեան արդէս լուսէն։ Յայլաց յա-
րուցեալ գունդու և սուրբն անուանելը ու
գէլութէ թէ վասն սպառելոյ ազգին առաջ-
նոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք լի-
նելոյ շկահեալ և ի բաց ընկեցեալ զազդն,
զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս
անուանը արքունի։ Այլ առաջինն համ-
տատ ի զարմից թագաւորացն առաջ-
նոյ։ որպէս և այժմ ի Վրաց աշխարհին,
Աեւածուն կոչի» (Խոր. բ. է.)։

Այս հատուածի մէջ ամենակարևո-
րը և ուշագրութեան արժանին է երկու
բառ— « ողու լուէմ » : Սա ցոյց է տալիս՝
որ « աստ ուրեմն Պարսից թագաւորու-
թեանն, « ողու լուէմ », յայլոց յարուցեալ
գունդա և սստան անուանելու ակտը՝
ամենաշատը մի տարով հազիւ առաջ
կարող էր կատարուած լինել խորենացու
այս տողերի գրուելու օրից, այլապէս՝
աւելի քան անտեղի պիտի լինէր գրել—
« ողու լուէմ » . . . Զեմ կարծում թէ մի
ոք, « ի միտս ունողաց », առանց խղճի
խայթ զգալու կամ առանց յետին մըտ-
քերի՝ համարձակուի ասել թէ՝ կեղծում
է խորենացին:

Ամփոփումն և ընդհանուր եզրակացութիւնն.—ինկատի առնելով, ա) որ՝ Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը հեղինակի լրջութեան և անկեղծութեան գրոշմն է կրում։ բ) Որ՝ Խորենացու և նորա Հայոց պատմութեան վերաբերութեամբ վստահութիւն և հաւատը մեծ է եղել և աներկբայելի՝ մինչեւ մեր օրերը։ գ) Որ՝ նոյն վստահելի Խորենացին է ասում, բացի հիների վկայութիւնները, թէ ինքը ու Սահակայ և Մեսրոպբայ աշակերտ էր։ դ) Որ՝ յայտնում է, թէ ինքը էր «ծերացեալ և հիւանդուտ և անսպարապ ի թարդմանութեանց», մինչ իւր մեկենաս Սահակ Բագրատու-

նին՝ պահաւելն « մանուկ, տհաս, խակ » պատանին եր) Որ՝ Ղազար Փարավեցին առ Վահան Մամիկոնեանը գրած թղթի մէջ արդահատօք յիշում է « Մովսէս փիլիսոփոս ցին՝ իբրև արդէն վախճանած» զ) Որ՝ պատմական աւանդութիւնը վկայում է, թէ Մովսէս Խորենացին ո. Սահակ Պարթեան « Երևար—ատենադպիրն էր» է) Որ՝ Ասորական բնագրից Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնը կատարուել է Մեսրովբեան կոչուած հայկական տառերի գիւտից (406 թ.) անմիջապէս յետոյց ը) Որ՝ արդէն ապացուցած եմ համարում, թէ Խորենացու գրչին է պատկանում Մնացորդաց Գրքերի առաջին հայ թարգմանութիւնը Ասորական առաջին բնագրից—Թարգումից թ) Որ՝ Խորենացին գրում է, ի հարկէ իւր սե օրերում կատարուած անցքի մասին, թէ՝ « ուղղէս լւէմ . . . ու գիտէմ » ժ) Որ, միւս կողմից, Խորենացու գէմ առարկութիւնները՝ առհասարակ ննդադրունենալը են եղած, ի հարկէ թիւրիմացութեանց արդիւնք։ Հետեւում է, ուրեմն, որ՝

Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան (Ճուրուրեանց),

Վաղարշապատի.

Եր.	Տող.	Ախալ.	Ուղիղ.
3.	30.	ոչ լինելոյ Յունի»	յոչ լինելոյ Յունի»
8.	2.	երկրիս այսորիկ»	զերկրիս այսորիկ»
10.	7.	միւսները՝ լքել	միւսներինը՝ լքել
„	25.	մինև ցարայն	մինչև ցԱրայն
„	29.	Արիւղինոս յիւրում	Արիւղենոս յիւրում

Ψ ρ ή ω λ f

ԲԱՐԴ. ԵՊԻՍԿ. Գ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆՑԻ

	Պ.	Կ.
ա) Խորենացուն Խորենացիվ պէտք է հասկանալ, Ա. հատ.	· · —	50
բ) Խորենացուն Խորենացիվ պէտք է հասկանալ, Բ. հատ.	· · —	1 —
գ) Վաղարշապատը եւ Ս. Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են .	—	20
դ) Ծշմարտութիւնը չի մեռնում:	· · · · ·	— 50
ե) Խորենացին Ե. դարի առաջին քառորդից մատենագիր.	· · —	40

Գումարով գնողներին 25% զիջումով.



Armenia
H 5-12'

8 մայոսի

ԳԻՆԵ 40 ԿՈՊԵԿ

5

ՀՀ Ազգային գրադարան



NL0375657

63.343

